

## ՀՀ Ազգային ժողովի՝ Մարդու իրավունքների հանձնաժողովին

Հարգելի տիկնայք և պարոնայք,

համաձայն գործող օրենսդրության, հասարակական միավորումն իրավունք ունի դատական կարգով պաշտպանելու միայն իր՝ որպես իրավաբանական անձի և իր անդամների իրավունքները: ՀԿ-ն կամ հիմնադրամը իրավասու չէ իր գործունեությունից բխող՝ հանրային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու դատարան, մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանի, ինչպես նաև այլ պետական և միջազգային կառույցների կողմից վաղուց ամրագրվել է այդ իրավունքի օրենսդրական ձևակերպման անհրաժեշտությունը: Հանրային շահերի պաշտպանության հայցով հասարակական միավորումների կողմից դատարան դիմելու իրավունքն ամրագրելու համար անհրաժեշտ է լրացումներ կատարել երկու իրավական ակտերում՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում, ինչպես նաև համապատասխան ոլորտային օրենսդրության մեջ:

Նշված իրավական ակտերում լրացում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-906 որոշման կատարման, Հայաստանի միջազգային պարտավորությունների պատշաճ կատարման, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի 180-րդ կետով սահմանված օրենսդրական բարեփոխումների իրականացման հետ: Այս առաջնահերթությունը բխում է նաև հանրային կյանքում հասարակական կազմակերպությունների դերի ուժեղացումը թելադրված է նաև Հայաստանի որդեգրած՝ եվրախնտեգրման քաղաքականությամբ: Մասնավորապես, Եվրոպական Միության Հարևանության Քաղաքականության համաձայն, Գործընկեր պետությունները պետք է ապահովեն քաղաքացիական հասարակության մասնակցությունը որոշումների կայացմանը՝ որպես «իրապես գործող ժողովրդավարական համակարգի հիմնասյուն»:

Իրականացված միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ գրեթե բոլոր Եվրամիության երկրների ու նաև Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ այս կամ այն չափով ամրագրված է հասարակական միավորումների կողմից հանրային շահերի դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը հիմնավորված է հետևյալ փաստերով՝

1. ՀՀ սահմանադրական դատարանը 07 սեպտեմբերի 2010 թվականին ընդունված ՄԴՈ-906 որոշմամբ սամանել է, որ հասարակական միավորումներին հնարավորություն է ընձեռվում հանդես գալու որոշակի խմբի կողմից իրավունքների պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ հասարակական կազմակերպության կոնկրետ նպատակների շրջանակներում է: Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը սահմանել է նաև, որ **հետագա օրենսդրական զարգացումները պետք է ընթանան վերոհիշյալ իրավական դիրքորոշման հաշվառմամբ:**

2. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի վերաբերյալ 2012 թվականի տարեկան հաղորդման համաձայն ՀՀ վճռաբեկ դատարանը, իր 01.04.2011Ա. ՖՇԻ լ./32/75/05/09 գնահատմ., յուրովի է մեկնաբանել ՀՀ սահմանադրական դատարանի՝ 07.09.2010Ա. զ, ձ-906 գնահատմ. ԳՆՅՆՅՄՅՄ ԳՆՅՆՅՄՅՄ ԿՆՅՆՅՄՅՄ ԿՆՅՆՅՄՅՄ, ինչը նշանակում է, որ **ՀՀ վճռաբեկ դատարանը այս հարցի առնչությամբ ձևավորել է սխալ նախադեպային պրակտիկա:**
  
3. 29 հոկտեմբերի 2012 թվականին ՀՀ նախագահի ՆԿ-159-Ն հրամանագրով հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի 180-րդ կետով սահմանվել է **հասարակական կազմակերպությունների վարչական-դատավարական իրավասուբյեկտության հիմնախնդրի վերաբերյալ օրենսդրական բարեփոխումների իրականացման կարևորությունը՝ հիմք ընդունելով Հայաստանի մասնակցությամբ միջազգային պայմանագրերի իմպլեմենտացիայի անհրաժեշտությունը:**
  
4. 2013 թվականի հուլիսի 16-ին ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի կազմում գործող՝ Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն կայացրել է ACCC/C/2011/62 որոշումն այն մասին, որ ՀՀ կառավարության և ՀՀ բնապահպանության նախարարության որոշումները վիճարկող՝ «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպության ներկայացրած դատական հայցը վարույթ չընդունելով Հայաստանի կառավարությունը խախտել է Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետը: **Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեն Հայաստանի կառավարությանն առաջարկել է փոփոխություններ մտցնել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում և Վարչական դատավարության օրենսգրքում՝ հստակորեն ամրագրելով հասարակական կազմակերպությունների՝ վարչական մարմինների գործողությունները դատական կարգով վիճարկելու իրավունքը:**

Վերոնշյալից հետևում է, որ հանրային իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտության հարցում առկա է խիստ հակասական դատական պրակտիկա (նույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի երկու՝ միմյանց հակասող նախադեպային որոշումներ): Այսօրինակ նախադեպային պրակտիկայի պայմաններում ՀԿ-ների դատական մատչելիության հարցում հիմնավոր կանոնակարգում կարող է արվել միայն նորմատիվային կարգավորման պարագայում:

Նշենք նաև, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի նախագծի աշխատանքային տարբերակներում սահմանած 16-րդ հոդվածի 2-րդ մասով նշված հիմնահարցի համար տրված էր հստակ սահմանում, որը որոշակի խմբագրումից հետո կարող էր լիովին համապատասխանել ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշմանը և Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի առաջարկություններին:

*Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ Ազգային ժողովի՝ Մարդու իրավունքների մշտական հանձնաժողովին առաջարկում ենք՝*

ա/ հանձնաժողովի օրակարգում գտնվող «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի նախագծի ընդունման գործընթացում հստակ նորմատիվային կարգավորման ենթարկել հանրային իրավունքների (ջահերի) պաշտպանության հարցերով հասարակական կազմակերպությունների դատական մատչելիության հիմնահարցը;

բ/ հիմնահարցի կարգավորման համար համապատասխան փոփոխություններ կատարել ներկայացված՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի նախագծում կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում, որը պետք է քննարկման դրվի առաջինի հետ միասնական փաթեթով: